



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 21 Օգոստոս, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 42

ԾԱՐԱԻ ԵՄ ՔԵԶԻ, ՏԷՐ

Ինչպէս եղչերուն վազող ջուրերուն կը փափաքի,
այնպէս ալ ես, ես քեզի՝ կը փափաքիմ, ով Աստուած:
Ծարաւ եմ Աստուծոյ, կենդանի Աստուծոյն.
Ե՛րբ պիտի գամ՝ ներկայանամ Աստուծոյ:
Օր ու գիշեր՝ արցունքս է կերակուրս,
մինչ օրն ի բուն մարդիկ ինձի կը հարցընեն.-«Ո՛ր է Աստուածդ»:
Որքան կը յիշեմ անցեալ օրերը,
այնքան աւելի սիրտս կը փղձկի:
Ինչպէս բազմութեան գլուխը անցած՝
Աստուծոյ տունը կ'երթայի
ցնծութեան ու երախտագիտութեան կանչերով,
մինչ բազմութիւնը տօն կը կատարէր:
Սակայն ինչո՞ր կը տխրիս, ով իմ անձս, կամ ինչո՞ր կը խռովիս.
Աստուծոյ յուսա, եւ վերստին գովերգէ՛ գայն, ըսելով.- «Փրկիչս դուն ես»:
Աստուած իմ , սիրտս այնքան տխուր է.
ահա թէ ինչո՞ւ փարագիր այս վիճակիս մէջ՝ կը մտածեմ քու մասիդ,
Յորդանանի երկրին, Հերմոնի եւ Փոքր լեռան վրայ:
Միտքս կ'երթայ սրբազանութեանդ օրերուն,
երբ ովկիանոսները ովկիանոսներուն՝ կ'արձագանգէին ջրվեժներու շառաչով:
Որովհետեւ, ճիշդ այդպէս՝
բարկութեանդ յորձանքներն ու բոլոր ալիքները փշրուեցան իմ վրաս:
Տէրը ինձի հետ է, ցերեկը՝ իր ցուցաբերած հոգածութեամբ,
գիշերը՝ իր երգով, որ աղօթք է՝ Աստուծոյ,
զիս կենդանի պահողին:
Եւ աղօթքիս մէջ կ'ըսեմ.-
Դուն ես իմ պաշտպան Վեմս,
ինչո՞ր մոռցար զիս.
ինչո՞ր համար տրտում ըլլամ,
երբ թշնամին կը նեղէ զիս:
Կարծես մահացու հարուած կը սրանամ
ամեն անգամ որ ոտխներս զիս կը նախապեն՝
հարցնելով.- «Ո՛ր է Աստուածդ»:
Սակայն ինչո՞ր պիտի տխրիմ, եւ կամ ինչո՞ր խռովիմ.
Աստուծոյ պիտի յուսամ, եւ վերստին գովերգեմ գայն, ըսելով.-
«Փրկիչս ես դուն, իմ Աստուածս ես»:

ՆԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:



ԾԱՐԱԲ ԵՄ ՔԵԶԻ, ՏԷՐ

Մտերմիկ, հարազատ աղօթք առ Աստուած: Այսօրուան մեր այս Սաղմոսը Կորնիսի որդիին Սաղմոսն է: Ով է Կորնիսի որդին, Տաճարին մէջ գործող պաշտօնեան: Այլ խօսով Սաղմոսներու ժողովածուին մէջ միայն Դաւիթին Սաղմոսները չեն, այլ նաեւ այլ ուրիշ հեղինակներու: Ամէն պարագայի, Դաւիթի կամ այլ ուրիշ հեղինակներու Սաղմոսները ըլլալէ աւելի, արդեօք ի՞նչ ունինք սորվելիք 42 Սաղմոսէն:

Ամէն բանէ առաջ համեմատականով մըն է որ կը սկսի: Ինքզինք կը նմանցնէ եղջերուի: Այնպէս ինչպէս ողջերուն ջուրի կը փափաքի, այնպէս ալ իմ անձս քեզի կը փափաքի ով Աստուած: Հեղաքրքրականօրէն ոչ թէ միայն եղջերուի պարագային, մեր պարագային ալ երբ ծարաւի ենք մեր մարմինները ջուրի կը փափաքին, որովհետեւ այս մարմին կոչուածը որ կազմուած է 70% ջուրով, երբ այդ փոկոսային մակարդակը կ'իջնէ, մարմինը կը սկսի արձագանգելու որ ջուրի կը կարօքի: Եղջերուի պարագային ալ երբ մարմնին ջուրի մակարդակը կ'իջնէ ջուրի կը փափաքի, բայց հեղաքրքրականօրէն վազող ջուրի, ոչ լճացած, կենդանի ջուրի: Այս համեմատական այս անգամ ոչ սովորական մեր մարմնին հետ այլ՝ մեր հոգիներուն հետ, երբ մեր հոգիներն ալ կը սկսին կորսնցնելու մակարդակը Աստուծոյ ներկայութեան: Հեղաքրքրականօրէն Գրիգոր Տաթեւացի վարդապետը կը ներկայացնէ մարդու կեանքը ըսելով, երբ մարդը կը սրբեղծուի, Աստուած մարդուն կու փայ արքայական հոգի եւ ծառայական մարմին, որպէսզի մարմինը ենթարկուի այդ արքայական հոգիին, բայց երբ մարդը կը մեղանչէ, այդ ծառայական մարմինը կը դառնայ իշխանական, իսկ արքայական հոգին սարրուկ, այս անգամ մարմինն է իշխողը իր ցանկութիւններով, իսկ հոգին հլու հնազանդ հետեւելու սարրուկի նման այդ մարմնին: Բայց ահա պահը կը հասնի, որ այդ հոգին բարձրադասակ ըսէ, որ ին անձս Աստուծոյ կը փափաք: Սա կը նշանակէ հոգիին փափաքը մէկ է, Աստուծոյ փափաքը ունի, իսկ մարմինին փափաքները այլազան ու բազմազան են, որուն համար ալ մարդու վիճակը ծանրաբերնուած ու հոգնած, որուն համար ալ հրաւեր կոչ կ'ուղղէ Քրիստոս ըսելով, ինձի եկէք դուք բոլորդ հոգնած ու բերնաւորուած եւ ես ձեզի հանգիստ պիտի փամ:

Ահա Սաղմոսերգուն կ'ըսէ ծարաւի եմ Աստուծոյ կենդանի Աստուծոյ, ոչ մեռած աստուածներու, որոնք ոչ կը փեսանեն, ոչ լը լսեն ոչ ալ կը քալեն: Հեղինակը վիճակի մը մէջն է որ կ'անցնի, վիճակ մո ըզինք յուսահատութեան մարմնած, վիճակ մը որ զինք փխրեցուցած, առաւել եւս վիճակ մը, որ իր թշնամիները իրեն կ'ըսեն , ո՛ր է քու Տէր Աստուածդ: Այնպէս կը զգայ, որ Աստուած զինք լքած է իր այդ վիճակին մէջ, սակայն այդպէս չէ, որովհետեւ պիտի արքայապարտի ըսելով Աստուած ինձի հետ է ցերեկ ու գիշեր: Յետոյ կը վերջիշէ անցեալի իր կապն ու վիճակը երբ Աստուծոյ փունը կ'երթար բազմութեամբ այնպէս իր շնորհակալութիւնը յայտնելու եւ Աստուծոյ ներկայութեան վայելքը կ'ունենար, կ'ուզէ դարձեալ այդ վայելքը, եւ ահա ինքզինքին կու գայ յիշեցնելու ըսելով, մի փխրիր ով իմ անձս եւ մի խռովիր, Աստուծոյ յուսայ, եւ դաւանիր, խոստովանիր, որ ինքն է Փրկիչդ:

Այս կ'անդրադառնայ իր այն վիճակին, որ Աստուծոյ բարկութեանը փակն է, բայց այդ բարկութիւնը որպէս հոգածութիւն, որուն համար ալ կ'արքայապարտի ըսելով, որ Աստուած ինձի հետ ցերեկ եւ գիշեր, ցերեկը իր հոգածութեամբ, իսկ գիշերը աղօթքով: Այս երեւոյթը յիշեցում է մեզմէ իւրաքանչիւրին թէ արդեօք մենք ալ ամէն օր կը զգանք որ Աստուած մեզի հետ է Իր հոգածութեամբ, իսկ գիշերը՝ աղօթքով երբ Իր հետ կը խօսինք, կը զգանք որ Ինք հոն է, եւ կամ մենախօսութիւն է որ կ'ընենք: Ահա այդ աղօթքի պահուան մէջ է որ նախ կը դաւանի որ Աստուած իր պաշտպանն է ու Վէմն է, յետոյ հարց կու փայ Աստուծոյ թէ ինչո՞ր գիտ մոռցեր ես, եւ ինչո՞ր փխրի երբ թշնամին զինք կը նեղէ: Եւ ահա մահացու հարուածի կը նմանի երբ թնամին իրեն հարց կու փայ ըսելով, ո՛ր է քու Տէր Աստուածդ: Բայց կրկնութեան գնով դարձալ ինքզինքին կը յիշեցնէ ըսելով ինչո՞ր փխրիմ կամ ինչո՞ր խռովիմ, Աստուծոյ պիտի յուսամ, եւ գովերգեմ անոր սուրբ անունը ըսելով, դուն ես իմ փրկիչս եւ Աստուածս:

Այսօր ալ ինչպիսի վիճակներուն մէջէն անցնինք, թող որ այդ վիճակները մեզ յուսահատեցնեն ու չփխրեցնեն: Սա չի նշանակեր որ չզգանք վիճակը, սակայն թող որ այդ վիճակները չփխրապետեն մեր վրայ ու մեր անձերը խռովեցնեն, ընդհակառակը հաւաքքն ու վստահութիւնը ունենանք եւ դաւանինք ըսելով, Աստուածս եւ Փրկիչս Դուն ես փեր Յիսուս Քրիստոս քեզմէ ուրիշ մէկը չունիմ:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս: